ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2020 թվականի N 236 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 29-ի N 649- Ա հրամանը՝

որոշում եմ.

1. Հաստատել 2020 թվականի 3-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 17-ի N ՍՊ/20.1/10461-20 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ 2020 թվականի հոկտեմբերի առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

16.07.2020

X

16 հուլիսի 2020թ.
ք. Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի

16 հուլիսի 2020թ. թիվ 236 -Ա որոշման

2020 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք հսկողության բնագավառ	Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1	Բերդ	3-րդ եռամսյակ	բնապահպանություն	Խմբի ղեկավար,	Թաթուլ Ստեփանյան
			առևտուր և զբոսաշրջություն	Խմբի անդամ	Ռոբերտ Գուլակյան
			արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն	Խմբի անդամ	Գուրգեն Հարությունյան
			ՏԻՄ պարտադիր լիազորություններ և	Խմբի անդամ	Սամվել Սուքոյան
			ոստիկանություն	Խմբի անդամ	Հայկ Փաշինյան
			ֆինանսներ	Խմբի անդամ	Աղաբեկ Գալստյան
			քաղաքաշինություն և	Խմբի անդամ	Ժորա Խաչատրյան
			կոմունալ տնտեսություն	Խմբի անդամ	Միսակ Մելքումյան,
			հողաշինություն և հողօգտագործում	Խմբի անդամ	Արմեն Ճաղարյան
			մշակույթ	Խմբի անդամ	Համլետ Փիրումյան
			ֆիզիկական կուլտուրա և սպորտ	Խմբի անդամ	Մարինե Խաչատրյան
			առողջապահություն	Խմբի անդամ	Արթուր Վանեսյան
			սոցիալական պաշտպանություն	Խմբի անդամ	Ռուբեն Տիգրանյան
			գյուղատնտեսություն և անասնաբուժություն	Խմբի անդամ	Հարություն Քոչարյան, Նարինե Ճաղարյան
			տրանսպորտ և կապ	Խմբի անդամ	Արկադի Ամիրխանյան
			քաղաքացիական ակտերի գրանցում	Խմբի անդամ	Արտակ Սարգսյան
				Խմբի անդամ	Գագիկ Մելիքբեկյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ